Ընդունված է՝
Կոլեգիալ կառավարման
խորհրդի նիստին
արձանագր. Թիվ 3
20 մարտի 2020 թ.

Հաստատում եմ՝
ԱԱՊՔ ՊՈԱԿ-ի տնօրեն
Ն.Ա.Մուրադյան
20 մարտի 2020 թ.

<<ԱՐՄԱՎԻՐԻ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ>> ՊՈԱԿ-ի ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ, ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. Հղումներ

1. ՀՀ կրթության մասին օրենք
2. ՀՀ նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության մասին օրենք
3. ՀՀ նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառությունն անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման կարգ
/ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թ. դեկտեմբերի 5-ի N 1278-Ն հրամանի/
4.ՀՀ նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման մասին կարգ
/ՀՀ ԿԳ Ն 2006 թ հուլիսի 21-ի թիվ 638-Ն հրաման/
5. <<Արմավիրի արվեստի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ի կանոնադրություն
6. . <<Արմավիրի արվեստի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ի Ներքին կարգապահական կանոններ

2 Ընդհանուր դրույթներ

2.Սույն կանոնակարգը սահմանում է <<Արմավիրի արվեստի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ի ուսանողի գիտելիքի, կարողությունների և հմտությունների ընթացիկ, կիսամյակային և վերջնական ստուգման և գնահատման կանոնները:

3. Գնահատման կարգ

3.1 Քոլեջում առկա է ստուգման երեք հիմնական ձև՝ ընթացիկ, կիսամյակային և տարեկան:

3.2Յուրաքանչյուր դասընթաց,ինչպես նաև կիսամյակային և վերջնական քննությունն գնահատվում է 10 միավորային համակարգով:

3.3 Ընթացիկ գնհատումը որոշվում է դասախոսի կողմից՝հաշվի առնելով ուսումնական նյութի բովանդակությունը, նպատակները եւ ուսանողների պատրաստման մակարդակը:

Ընթացիկ ատեստավորման արդյունքները նշվում են մատյանում:

3.4. Կիսամյակային գնահատումը կատարվում է տարին երկու անգամ, յուրաքանչյուր կիսամյակի կեսին ուսումնական ծրագրի բոլոր առարկաներից:

Կիսամյակային գնահատման նպատակն է բացահայտել կարգապահության զարգացման մակարդակը եւ որակը:

3.5 Եթե առարկան քննական է, կիսամյակային գնահատականը քննական է, մյուս դեպքերում կիսամյակը գնահատվում է ստուգողական աշխատանքների կամ ոչ պակաս ընթացիկ հինգ գնահատականների հիման վրա:

3.6. Տարեկան գնահատումը իրականացվում է տարին մեկ անգամ:

3.7. Կիսամյակային և վերջնական ստուգումն իրականացվում է ստուգարքի և քննությունների միջոցով: Քննություններն անցկացվում են բանավոր, գրավոր, կատարումներով, /համերգային ելույթով/ , ցուցադրումով /անհատական ցուցահանդեսով/,բեմական ներկայացումով: Յուրաքանչյուր առարկայի քննության կազմակերպման ձևը առաջարկվում է ցիկլի կողմից, հաստատվում մանկ.խորհրդի կողմից և նշվում է առարկայական ծրագրում:

3.8 Դասընթացի գնահատման առանձնահատկությունները սահմանվում և ներկայացվում են առարկայական ծրագրում

3.9 Դասընթացի ընդհանուր գնահատականի մեջ հաշվի են առնվում առարկայական ծրագրում սահամանված բաղադրիչները , որոնք ընդգրկված են սույն կարգի Հավելվածում:

3.10 Ուսանողների գիտելիքների ընթացիկ գնահատումը՝ընթացիկ ստուգումների տեսքով , իրականացվում է կիսամյակի ընթացքում և արձանագրվում կիսամյակի վերջում, իսկ վերջնական գնահատումը՝կիսամյակի վերջում՝ստուգարքների կամ քննությունների հանձնման համար սահմանված ժամկետներում

4. Գիտելիքների , հմտությունների և կարողությունների գնահատում

4.1 Գիտելիքը գնահատելիս պետք է հաշվի առնել.

- առարկայի վերաբերյալ գիտելիքները

-ուսումնասիրվածության հասկացողությունը, դատողության ինքնուրույնությունը, շարադրանքում համոզվածությունը,

- համակարգվածության աստիճանը եւ գիտելիքների խորությունը,

- գիտելիքի արդյունավետությունը, գործնական խնդիրները լուծելու համար դրանք կիրառելու ունակությունը:

4.2 Հմտություններն ու կարողությունները գնահատելիս հաշվի են առնվում.

- հմտությունների և ունակությունների բովանդակությունը,

- հմտությունների և ունակությունների հստակությունը, ամբությունը և ճկունությունը

- գործնականում հմտությունները և ունակությունները կիրառելու կարողությունը,

- սխալների առկայությունը, դրանց թվաքանակը, բնույթը եւ աշխատանքի վրա ազդեցությունը:

5 Վերահսկման ձեւերը եւ մեթոդները

5.1. Վերահսկման եւ գնահատման ընթացքում պետք է կատարվեն հետեւյալ պահանջները.

- Գնահատումը պետք է լինի օբյեկտիվ եւ արդար, ուսանողի համար հստակ եւ հասկանալի.

- գնահատումը պետք է իրականացնի խթանող գործառույթ.

- գնահատումը պետք է կրի անհատական բնույթ: Յուրաքանչյուր ուսանող գնահատվում է ելնելով անհատական հոգեբանական առանձնահատկություններից եւ գործադրած ջանքերից,

- Գնահատումը պետք է իրականացվի պարբերաբար եւ համակարգված:

առարկաներ	Վերահսկման ձեւերը եւ մեթոդները:
Երաժշտական-տեսական առարկաներ Ընդհանուր մասնագիտական առարկաներ	Բանավոր հարցում Գրավոր աշխատանքներ Ռեֆերատ Կուրսային աշխատանք

	Թեստավորում Գործնական պարապմունքներ
Ընդհանուր հումանիտար եւ սոցիալ-տնտեսական ցիկլի առարկաներ Հանրակրթական առարկաները	Բանավոր հարցում Գրավոր աշխատանքներ Ռեֆերատ Թեստավորում Կիսամյակային ամփոփիչ աշխատանք
Մասնագիտական առարկաներ	Ակադեմիական ստուգարք Տեխնիկական ստուգարք Գործնական փորձ եւ բեմական աշխատանք (դերասանական եւ խորեոգրաֆիկ ստեղծագործության բաժիններ) Աշխատանքների ցուցադրություն (դիզայնի բաժին)

6. Դասընթացի վերահանձնում

6.1 Ստուգարքներից պարտք ունեցող ուսանողին թույլատրվում է մասնակցել քննություններին, բացառությամբ այն առարկայի /մոդուլի/ քննությանը, որից ունեն պարտք:

6.2 Ստուգարքների և քննությունների վերահանձնումը՝ որպես ակադեմիական պարտք իրականացվում է քննաշրջանում և պարտքերի մարման շրջանում:

6.3 .Ուսանողին հնարավորություն է տրում յուրաքանչյուր առարկան ,ներառյալ պարտքերի մարման շրջանը, հանձնել ոչ ավելի, քան երկու անգամ: Պարտքերի մարման շրջանի համար վերջնաժամկետ է սահմանվում ընթացիկ կիսամյակի երկրորդ շաբաթվա վերջը:

6.4 Տվյալ շրջանի պարտքերի մարման համար սահմանված ժամանակաշրջանից հետո ստուգարքային կամ քննական որևէ առարկայից դրական չգնահատված ուսանողը հեռացվում է քոլեջից՝ կիսամյակում ցուցաբերած անբավարար առաջադիմության համար:

6.5 Ամբողջ ուսումնառության ընթացքում գերազանց առաջադիմություն ցուցաբերած, սակայն այդ ընթացքում մինչև 2 <<բավարար>> գնահատական ստացած ուսանողներին թույլատրել նախաավարտական կիսամյակային քննաշրջանում վերահանձնել առարկայական/մոդուլային ստուգարքները , քննությունները: Ուսանողը վերահանձնումից երեք աշատանքային օր առաջ ուսումնական գծով տնօրենի տեղակալին ներկայացնում է գրավոր դիմում:

7 Ուսանողի ակադեմիական կարգավիճակը

7.1 Ըստ ուսման առաջադիմության ուսանողները դասակարգվում են որպես՝ գերազանց և լավ , բավարար և հեռացման ենթակա ուսանողներ:

7.2. Հեռացման ենթակա են այն ուսանողները , ովքեր

- Քննաշրջանում երեք և ավելի առարկաներից կամ մեկ առարկայից՝ երեք անգամ ստացել են <<անբավարար >> գնահատական

7.3 Վատ առաջադիմության հնարավոր պատճառները.

- վատ հաճախում,
- ինքնուրույն անբավարար աշխատանք,
- թույլ ունակություններ,
- առարկան սովորելու ցանկության բացակայություն,
- դասի ընթացքում անբավարար աշխատանք,
- ոչ օբյեկտիվ գնահատում դասի ընթացքում,
- դասի ընթացքում դասավանդողի կողմնապահ վերաբերմունք,
- տնային հանձնարարությունների հսկայական ծավալ,
- դասավանդողի ուշադրության պակաս,
- Նյութի դժվարության բարձր մակարդակ, անմատչելիություն,
- այլ պատճառներ:

8 Շրջանավարտների պետական ամփոփիչ ստուգումը

8.1. Շրջանավարտների պետական ամփոփիչ ստուգումը /դիպլոմային աշխատանքի պաշտպանությունը կամ պետական ամփոփիչ քննությունների հանձնումը/ իրականացվում է՝ համաձայն ՀՀ նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման մասին կարգի

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Սույն կանոնակարգը հաստատվում է քոլեջի կոլեգիալ կառավարման խորհրդով և վավերացվում է քոլեջի տնօրենի կողմից:

Հավելված 1

1. Ընթացիկ գնահատման հիմնական բաղադրիչներ

Ուսանողի ներկայաությունը, լսարանային ակտիվությունը, արտալսարանային աշխատանքը ընթացիկ ստուգում , կիսամյակային ստուգարք կամ քննություն:

2. Ըստ մասնագիտությունների քննության գնահատման հիմնական չափանիշները

Մասնագիտություն	Գնահատման չափանիշնարե
Երգեցողություն	1Ծրագրի ամբողջակա նությունը 2 Տեխնիկական պատրաստվածությունը 3 Ձայնարտաբերման, բազմաձայնու թյան որակը 4 Խոսքի արտահայտչականությունը 5. Ոճային մեկնաբանությունը 6. Ծրագրի համապատասխանությունը
Գործիքային կատարողական արվեստ	1Ծրագրի ամբողջակա նությունը 2 Տեխնիկական պատրաստվածությունը 3 Ձայնարտաբեր ման, բազմաձայնու թյան որակ 4 Ոճային մեկնաբանու թյուն 5. Ծրագրի համապատասխանություն
Պարարվեստ, դերասանական արվեստ	1.Ուսումնական ծրագրի ամբողջականու թյուն 2.Տեխնիկական պատրաստվա ծություն 3. Երաժշտական և բեմական

	զգացմունքայնու թյուն 4. Դերասանի վարպետություն 5. Տարբեր պարառճերի կերպարանափոխման կարողություն 5. Խմբապարերում /խմբակային/ աշխատելու կարողություն
Գեղանկարչություն,դիզայն	1.Առաջադրանքների ամբողջակա նություն 2.թղթի վրա առաջադրանքների ճիշտ տեղադրում և կառուցում 3.տեխնիկան և նյութերի կիրառման որակ 4. Ծավալային, տոնային և գունային լուծումների կարողության աստիճան 5. կառուցողական, մասշտաբային, տեսողական-արխիտեկտոնիկ լուծումների աստիճան 6. Առաջադրանքնե րի վերջնական արդյունք /հաղթահարման աստիճան

3. Տասը բալանոց սանդղակի և ավանդական հինգ բալանոց համակարգի փոխկապակցվածությունը

Տասը բալանոց սանդղակ	Հինգ բալանոց սանդղակ
1. — շատ թույլ	2+ (երկուսին գումարած)
2. — թույլ	
3. —ոչ անցողիկ	
4. — բավարար	3 - (երեքից հանած)
5. — ոչ այնքան լավ	3 անցողիկ
6. — լավ	3+ (երեքին գումարած)
7. — շատ լավ	4- (չորսից հանած)
8. — հրաշալի	4 լավ
9. — գերազանց	5- (հինգից հանած)
10. — բացառիկ փայլուն	5 (բացառիկ փայլուն)

4. Ակադեմիական պարտք՝ հասկացողությունը՝ կիսամյակի քննաշրջանի արդյունքներով՝ ներառյալ երկու վերահանձնման փուլերը, տվյալ առարկայական դասընթացի (մոդուլի) համար ոչ բավարար գնահատական ստացած կամ քննությանը չներկայացած